ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

Հոդված 17. Փոստային կապի օբյեկտների և միջոցների տեղաբաշխումը

Բնակավայրերի զարգացումը պլանավորելիս քաղաքային և գյուղական համայնքների, մարզերի, ինչպես նաև բնակելի շենքերի և պլանավորման կառուցվածքի այլ տարրերի շինարարության և վերակառուցման ժամանակ պետական քաղաքաշինության նորմատիվներին և կանոններին համապատասխան պետք է նախատեսվեն փոստային կապի օբյեկտների տեղակայման համար շենքերի, ինչպես նաև տարածքների նախագծում և շինարարություն:

Փոստային կապի օբյեկտների տեղակայման համար նախատեսված հողամասերը հատկացվում են պետական կարիքների համար՝ հողերի հատկացման կարգով:

Փոստային կապի ազգային օպերատորին փոստային կապի օբյեկտների տեղակայման համար հողամասերի հատկացումն իրականացվում է լիազորված մարմնի միջնորդությամբ: Լիազորված մարմինը հանդես է գալիս որպես համապատասխան աշխատանքների պատվիրատու:

Փոստային կապի ազգային օպերատորին փոստային կապի օբյեկտների համար հատկացված հողամասերը կարող են տրամադրվել մշտական (անժամկետ) անհատույց օգտագործման համար:

Փոստային կապի ազգային օպերատորը ազատվում է գույքահարկից, հողի հարկից, տեղական հարկերից և տեղական ինքնակառավարման մարմինների սեփականությունը

համարվող տարածքների վարձակալման համար նախատեսված վճարներից և վարձավճարներից:

Փոստային կապի ազգային օպերատորին փոստային կապի օբյեկտների շինարարության համար հողամասերը պետք է տրամադրվեն բնակավայրերի կենտրոնական մասում՝ ապահովելով համապատասխան պայմաններ տրանսպորտային միջոցներով փոխադրվող փոստային առաքանու փոստափոխանակման համար:

Փոստային կապի ազգային օպերատորի փոստային կապի օբյեկտների տեղակայումն ավտոկայանների, երկաթուղային կայանների և օդակայանների մոտ կատարվում է տեխնոլոգիական նորմաներին համապատասխան:

Տեղական ինքնակառավարման մարմինները փոստային կապի ազգային օպերատորին տրամադրում են գործող (կամ կառուցվող) բնակելի կամ այլ շենքերում ոչ բնակելի տարածքներ, ըստ տեխնոլոգիական նորմաների՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշվող կարգով և պայմաններով:

Փոստային բաժանորդային պահարանները բազմահարկ բնակելի շենքերում տեղադրում են շինարարական կազմակերպությունները: Փոստային բաժանորդային պահարանների ձեռքբերման և տեղադրման ծախսերը ներառվում են այդ շենքերի շինարարության նախահաշվում:

Բնակելի շենքերում փոստային կապի ծառայություններից օգտվողները փոստային առաքանի ստանալու համար փոստային բաժանորդային արկղերը տեղադրում են սեփական միջոցների հաշվին:

Փոստային կապի ազգային օպերատորը իրավունք ունի հասարակ նամակների և փոստային բացիկների հավաքման համար անհատույց փոստարկղեր տեղադրելու բնակելի և վարչական շենքերի պատերին և հարմար այլ վայրերում՝ նախապես համաձայնեցնելով բնակելի և վարչական շենքերի սեփականատիրոջ հետ:

Փոստային կապի օբյեկտներում այլ կազմակերպությունների տեղակայումը թույլատրվում է փոստային առաքանու և դրամական միջոցների պահման անվտանգության և փոստային կապի գաղտնիության ապահովման պայմանով, ինչպես նաև եթե այդ տեղակայումը չի խաթարում և չի խոչընդոտում փոստային կապի ծառայությունների մատուցումը:

«Փոստային կապի օբյեկտների մուտքերը և շինության բոլոր կողմերը պետք է ապահովված լինեն անընդմեջ և բարձր որակի տեսագրություն իրականացնող տեսահսկման համակարգերով՝ օրվա մութ ժամերին նկարահանելու և տեսագրությունն առնվազն 15 օր պահպանելու հնարավորությամբ: Տեսահսկման համակարգերի պարտադիր կահավորումը պետք է իրականացվի այնպես, որ եթե տվյալ տարածքը տեղակայված է շենքի (շինությունների) առաջին հարկում, ապա տվյալ տարածքի երկայնքով ապահովվի երկկողմանի տեսահսկում՝ տեսախցիկների տեսադաշտում ներառելով մուտքի (մուտքերի) դուռը (դռները), երկայնքով՝ ամբողջ տարածքը, եթե տվյալ տարածքը առանձին շենք (շինություն) է, ապա ապահովվի ամբողջ տարածքի պարագծի տեսահսկումը՝ ներառելով մուտքի (մուտքերի) դուռը (դռները), եթե տվյալ տարածքը առանձին շենք (շինություն) է, որն առանձնացված է պարսպով, ապա ապահովվի ամբողջ պարսպի երկայնքով պարագծի տեսահսկումը՝ ներառելով մուտքի (մուտքերի) դուռը (դռները)՝ 2 մետր լայնությամբ, իսկ պարսպի բացակայության դեպքում տեսահսկման համակարգերը պետք է տեղադրվեն տնտեսվարողի սեփականություն հանդիսացող տարածքի ողջ երկայնքով՝ 2 մետր լայնությամբ՝ ապահովելով տեսահսկումը տնտեսվարողի սեփականություն հանդիսացող ողջ տարածքով: Պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանն ամենօրյա 24-ժամյա իրական ժամանակի ռեժիմով հասանելիության տրամադրումը նշված պարտադիր տեսահսկման համակարգերին: Տեսահսկվող տարածքում պետք է փակցված լինեն «Տարածքը տեսահսկվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից» բովանդակությամբ հայտարարություններ:

(17-րդ հոդվածը լրաց. 25.12.06 ՀՕ-32-Ն)